

տատած էր Ղուկուլլոս իւր ընդհանուր բանակա-  
տեղին, համախուսմբ կը գումարէ իր ուժերը, Մու-  
տիտ գիւղին շրջակայքը, ուր ոչ թէ հուն մը՝ այլ,  
անտարակոյս ամենայամար գիրքը կը գտնուէր  
Բոհտան-չայէ՝ քսենոփոնի կենտրիտեսէն, հու-  
նելու, ուսկէ այս վերջինս եւս իւր առաջնորդու-  
թեան տակ նահանջող յունական Բիւրն անցու-  
ցեր էր երբեմն<sup>1</sup>: Սոյն անցքին վայրը Հ. Կիպեր-  
տի քարտէսին վրայ եւս նշանակուած կը գտնենք  
մերձաւորապէս այն կէտին վրայ, ուր Բէօլէօկի  
ուղին՝ Թիլէ դէպի Բենդիս տանող ճամբուն ճիշդ  
Բոհտան-չայի արեւելեան եզերքը կը հանդիպի<sup>2</sup>:

Հոս ուրեմն, այս հունէն Ղուկուլլոս, առանց  
մեծ դժուարութեան, իւր լեգէոնները գետին  
հանդիպակողմը կ'անցընէ, եւ աջակողմեան եզեր-  
քի բարձրաւանդակ սարահարթէն յառաջանա-  
լով՝ կը հասնի այսօրեան Կերբիպերոյ եւ Ռեդ-  
վան կոչուած վայրերը, ուսկէ անդին իւր, ինչ-  
պէս նաեւ երբեմն քսենոփոնի առջև, Հազրուի  
վրայով՝ Ներջիկի տանող ճամբան կը բացուէր:  
Յետոյ կը բաժնէ նա իւր բանակն երկու խում-  
բերու, որոնցմէ հեծեղազունդն ու աղետերն հեշտ  
վերելքով լեռնուղիէն կը բարձրանան, իսկ հե-  
տեակները ձորի մէջէն ու նոյնին վերի կողմէն  
տանող ճամբով քայլելով Շէնի փոքր մէկ հար-  
թավայրը կը հասնին, ուր երկու խումբերն իրա-  
րու միանալով դադար կ'առնուն: Եւ երբ յետոյ  
ձիւղներու գունդը ձախ թեւն առած՝ աղետ-  
բով միասին, Կոզմի-դաղի ճամբան կը բռնէ,  
լեգէոնները միջին ու արեւելեան ճամբաներով  
իրենց չուն կը շարունակեն, մինչև որ բոլոր  
գունդերը՝ դաշտագետնի մը վրայ, հետեւեալ  
օրը, դարձեալ իրարու կը միանան:

Այսպէս ուրեմն Ղուկուլլոս՝ կենտրիտեսի  
հունէն մինչև Մշոյ դաշտն երկարող 175 քի-  
լոմետր ճամբան 10—11 օրեան մէջ, որոնցմէ  
երեքը լեռնուղոյ վրայ միայն, կտրել անցնելէ  
ետքը, կը մտնէ բուն Հայաստան:

(Շարունակելի):

Հ. Գ. ԳԱՐԱՆՓՈՂԵԱՆ

ՀՈՒՆՆԵՐԻ ԵՒ ՀՅՅԵՐԸ

ԺԶ—ԺԹ. ԿԵՐԵՐՈՒՄ

Գ.

(Շարունակութիւն):

Ոսկան ծնած էր Սպահանում, բայց իր  
ծնողքը Ղլըջնք, ի բնէ Երեւանցի էին եւ  
գտնվում էին այն բուն գաղթականների շար-  
քում, որոնք Շահաբասի հրամանով տեղահա-  
նուեցան հին Զուղայից եւ հիմնեցին Նոր Զու-  
ղան: Այս պատճառով էլ նա իր անուան սիրում  
էր կցել Երեւանցի կոչումը: Ոսկան իր սկզբնա-  
կան ուսումն առած էր Նոր Զուղայում: Սիմէոն  
Զուղայեցի կաթողիկոսը նրա հայրենակիցն ու  
ժամանակակիցն էր: Նրանք երկուսն էլ աշակերտ  
էին կեսարացի Խաչատուր վարդապետին: Ոսկան՝  
Մովսէս կաթողիկոսի հետ գնաց Իջմիածին, այն-  
տեղ իր ուսումը շարունակելու եւ ապա դար-  
ձաւ իր հայրենիքը, իսկ երբ Փիլիպպոս կաթո-  
ղիկոս, հայրապետական աթոռը բազմեց, Ոսկա-  
նին կանչեց Իջմիածին, ուր եւ մնաց բոլորովին:

Այն ժամանակ Իջմիածնում էր բնակվում,  
ասում ենք բնակվում, որովհետեւ նա տարիներ  
լով ապրել է այնտեղ, մի լատին կրօնաւոր դո-  
մինիկեան կարգից, Պօղոս Պիրոմալի Սիդեոնացի,  
որ Հռոմից Մերձաւոր Արեւելք էր ուղարկուած  
քարոզչական պաշտօնով: Սա՝ տեղական տարա-  
զով ամբողջ 4 տարի շրջագայել էր այն կողմերը  
եւ ապա եկել էր Իջմիածին հայոց կաթողիկոսին  
այցելութեան: Աստուրականում եւ Այրարա-  
տեան գաւառում երկար ժամանակ մնալով բա-  
ւական հայերէն էր սովորել, որ քիչ չօգնեց նրա  
Իջմիածնում տեղաւորուելուն: Իջմիածնում Ոս-  
կան եւ Պիրոմալի այնչափ մտերմացան որ իրար  
ուսուցչութիւն էին անո մ: Իտալացի կրօնաւորը  
Ոսկանին լատիներէն էր սովորեցնում իսկ Ոսկան  
նրան հայերէն: Այսպէս փոխադարձ օգնութեամբ  
նրանք թարգմանութիւններ էին անում այս եր-  
կու լեզուներից, թէպէտ բաւական անջաղ:  
Պիրոմալի 4 տարի մնաց Իջմիածնում եւ Հռոմ  
դառնալու ժամանակ հետը տարաւ հայերէն Աս-  
տուածաշունչի մի ձեռագիր եւ շատ աշխատեց,  
որ իրաւունք ստանայ տպագրելու Հռոմում: Բա-  
րեբախտաբար լատին բարձրագոյն իշխանու-  
թիւնը զւարճաւ նրան այդ իրաւունքը. բարեբախ-  
տաբար ենք ասում, որովհետեւ Պիրոմալի թե-  
թեւամտութեամբ անտեղի սրբագրութիւններ  
էր մտքել իր կողմից հայերէն գրչագրի մէջ,  
աշխատելով յարմարեցնել լատինական Աուլգա-

1 Հմմտ. առ. այս C. F. Lehmann-Haupt ի թերթս  
Wiener Zeitschrift für die Kunde des Mor-  
genl. 14 (1900) S. 40; Abb. der Berl. Akad.  
d. Wiss. 1899, S. 745 եւ Literar. Zentralblatt  
1900. (Բնագրատութիւն Կարբէի յօդուածին առթիւ) Տես  
նաեւ Armenien einst und jetzt, Ա. հար., էջ 342 եւ:  
2 Հաս աւելի որոշ ցոյց կու տայ Ռ. Կիպերտի բար-  
տէն այս կողմերու երկրագրական դիրքը: Հոս սակայն փո-  
խանակ Բէօլէօկի-Բալակի եւ փոխանակ Մուտիտ-Մօտի  
նշանակուած է:

տային, ուր որ ինչպէս յայտնի է, հայերէն թարգմանութիւնը կատարուած է «Եօթանասնից» օրինակից: Պիրոմալի հանգիստ չմնաց: Նա նորից Էջմիածին եկաւ եւ Ոսկանի հետ միասին, գլուխ գլխի տալով դարձեալ «սրբագրել», ուզեցին հայերէն Աստուածաշունչը, փոփոխութեան ենթարկելով Ոսկեդարի թարգմանիչների թարգմանութիւնը: Հռոմում Պիրոմալիի գտած ահա այս անյաջողութիւնը մասամբ պատճառ դարձաւ, որ Ոսկան Եւրոպա գայ իրականացնելու միեւնոյն նպատակը, այն է Աստուածաշունչը տպելը:

Ոսկան Էջմիածնից գնաց Չմիւռնիա, որ եթէ ոչ միակ՝ գէթ լաւագոյն ճանապարհն էր դէպի Միջերկրականի եւրոպական այն նաւահանգիստները, ուր հայ գաղութներ էին հաստատուած: Նա եկաւ նախ Լիփոնոյ, ուր արդէն հայ գիրքը լոյս էր տեսած եւ շատ աշխատեցաւ, որ տեղւոյն հայ վաճառականները նիւթական միջոցներ տան իրեն՝ լայն չափերի վրայ հիմնուած տպարան հաստատելու, որպէս զի նախ Աստուածաշունչը տպագրէ եւ ապա ուրիշ եկեղեցական գրքեր: Բայց իր յուսացած օժանդակութիւնը չգտաւ: Հայ վաճառականները խնդրի վրայ նայել են զուտ շահագիտական տեսակէտից, կամ ինչպէս Ոսկանն է ասում, «ոչ զօգուտ ազգի եւ զսրբոյ աթոռոյն, այլ զանձանց զցանկութիւն եւ կամաց զհաճութիւնն կամէին ընուլ»: Այնտեղից նա գնաց Հռոմ, բայց աւելի յաջողութիւն չունեցաւ քան Պիրոմալի. հակառակութիւն գտաւ «Թէ ի մերայնոց ազանց եւ թէ ինքեանց սահմանաց եւ կանոնաց»: Հոգեւոր իշխանութիւնը դժուարանում էր, ըստ երեւոյթին, իրեն անհասկանալի լեզուով Սուրբ Գիրքը տպել արտօնելու: Որով Ոսկան ստիպվում է դարձեալ Լիփոնոյ գալ, ուր վերջապէս գտնում է Յ Ջուղայեցի, Պետրոս Աւագ Գոնսուլ Հայոց, Գթուէէնց Գեւորոս (Թէոդորոս) եւ Խոնենց Ստեփան: «Աստուածասէրք եւ Աորովի այսոքի՛ հայելով ի նուաղութիւն աստուածայնոց կտակարանաց որ ի մէջ ազգիս Հայոց... ջերմեռանդ սիրով յօժարեալք յորդորեցին զմիմիանս, քաջալերելով եւ զիմն նուաստութիւն», գրում է Ոսկան, խոստանում են հարկ եղած դրամական միջոցները հայթայթել «Առ ի յօգուտ ազգիս եւ ի շահ սուրբ աթոռի»: Այս բարի նպատակը հիմն է կազմում նրանց ստորագրած պայմանագրին, ըստ որում Պետրոս եւ Ստեփան խոստանում էին տպագրուելիք Աստուածաշունչի վաճառումից իրենց պատկանած շահը նուիրել Էջմիածնին, իսկ Թէոդորոս էլ իր բաժին շահը պիտի տար կէսը Էջմիածնին

կէսը Ս. Սարգսի վանքին: Այս յաջողութիւնից խրախուսուած, Ոսկան եկաւ Ամստերդամ, ընդունեց իր վրայ Աւետիսի տպարանի ղեկավարութիւնն եւ անմիջապէս ձեռնամուխ եղաւ իր փայտայած նպատակի իրագործման:

Ոսկան Ամստերդամ եկաւ 1664ին: Նրա գալն արդէն յայտնի էր իր եղբօրն Աւետիսին, որ երբ Չմիւռնիա էր մեկնում, տպարանը փակել էր եւ բանալին յանձնել իր մի ծանօթին, որ երբ իր բացակայութեան ժամանակ Ոսկանը գայ, բանալին տայ սրան:

Ոսկան անմիջապէս գործի սկսաւ Ամստերդամում: Տպարանն այն միջոցին երկու տեսակ տառեր ունէր, նախ՝ Ծարեցու շինել տուած առաջին տառերն, որոնք խոշոր էին ու անյարմար, երկրորդ՝ Աւետիսի պատուիրածներն, որոնք համեմատաբար աւելի լաւ էին, բայց բաւական չէին Աստուածաշունչի տպագրութեան համար, ուստի Ոսկան ինքն էլ պատուիրեց, գլխաւորաբար նոտրգիրեր<sup>1</sup>: Բացի դրանից նա շինել տուեց նաև պատկերներ Ս. Գրքից առնուած, յատկապէս Աստուածաշունչի համար:

Մինչեւ այս պատրաստութիւնները լրանալը Ոսկան օգնում էր իր աշակերտ Կարապետ վարդապետին, որի Շարականն ու Սաղմոսարանը՝ 1664—1666ին՝ Ոսկանի գործակցութեամբ են տպուած:

Ոսկանի հրատարակած առաջին գիրքն էր՝ «Գիրք Այբուբենից յաղագս նորեկ տղայոց եւ մանկանց անկրթից», նաև արանց դեռ եւս ոչ ուսելոց, որոց լիցի օժանդակ հասանիլ ի կատարումն կրթութեան եւ ի վարժումն ճահապէս ընթերցողութեան: Զօրինեալ ներտպարանում սրբոյ Էջմիածնի եւ սրբոյն Սարգսի զօրավարի: Թամբսկերտամ քաղաքի: Ի ներթուում Փրկչին 1666, իսկ Հայոց ՌճԹե Յունուարի Գ. »:

Ոսկանի գլուխ գործոցը, Աստուածաշունչը, լոյս տեսաւ նոյն 1666ին, երկիջեան, մաքուր տպագրութեամբ եւ պատկերազարդ: Նրա վերնագիրն էր՝ «Աստուածաշունչ գրոց եւ նորոց կտակարանաց ներպարունակող, շարակարգութեամբ նախնեացն մերոց եւ ճշմարտասիրաց թարգմանչաց: Իսկ ըղկնի հրամանաւ վեհափառին տեսուն Յակոբայ Հայոց կաթուղիկոսի՝ գլխակարգեալ եւ տընտեալ ըստ դաղմատականացն, նաեւ զհամաձայնութիւն հանուրոց գրոց աստուա-

<sup>1</sup> De Roever պատմում է, որ Christoffel van Dijk 1666ին Gabriel Grigoria (Grigorian?) անունով մի հայի հետ եւս պայման էր կապել նրա համար հայերէն տառեր ձուլելու: «Uit onze oude Amstelstadt», էջ 11—12:

ծաշնչից, ընդ երկարս առննթեր կարգեալ ամենեցուն, նուաասի ումեմն բանի սպասաւորի Ոսկանի Երեւանեցոյ: ՅԱմստերգամ ներսպարանում սրբոյ Էջմիածնի եւ սրբոյն Սարգսի զօրավարի ի թուում Փրկչին 1666 իսկ Հայոց ՌՃԷ:»

Այսպէս իրականացաւ վերջապէս Հայ ժողովրդի միահամուռ փափագը, Ս. ԳԻՐԵՐ Հայերէն տպագրութեամբ լոյս տեսաւ ընդհանուրի գործածութեան համար: Միևնոյն ժամանակ Հռոմի Ս. Ժղովի երկիւղն արգարացաւ. Հայերէն Աստուածաշունչը տպագրուեց «Հերետիկոս Հոլանդայում»: Ոսկան ստիպուած էր շատ տեսակէտներով հաշուի առնել կաթողիկ բարձր իշխանութեան այս տրամադրութիւնը: Բաւական էր նոյն իսկ միայն այն, որ Հռոմ կարող էր արգելք դնել նրա տարածման կաթողիկ դաւանութեան պատկանող Հայոց մէջ, որոնք աննշան չէին որպէս թուով նոյնպէս եւ ազդեցութեամբ: Անհրաժեշտ էր ուրեմն Հռոմի բարեհաճութիւնը ձեռք բերել: Ոսկան դիմեց այս նպատակով Ամստերդամում պապի նուիրակ Յովհ. Եպիսկոպոսին (Johannes episcopus Castoriensis): Նուիրակը խորհուրդ տուեց նրան, որ կամ ինքն երթայ անձամբ Հռոմ եւ կամ փոխանորդի ձեռքով իր Աստուածաշունչը ներկայացնէ Ս. Ժղովի քննութեանն ու հաւանութեանը:

Ոսկան անյարմար գտաւ, ի նկատի առնելով իր առաջին անջնորդութիւնը Հռոմում, որ ինքը գնայ Հռոմ եւ որտեղ իր օգնական կարպետ վարդապետին ուղարկել: Նա խնդրեց նուիրակից էլ, որ սա իր կողմից իր օգնութիւնը չզլանայ կարպետի այս առաքելութեան:

Լատին եպիսկոպոսը սիրով յանձն առաւ կատարել Ոսկանի խնդիրքն եւ յանձնարարական նամակ տուաւ յանուն Հաւատոյ Տարածման Ժողովի ֆարտուղարին: Ահա այդ յանձնարարականն, որ գրուած է Ամստերդամում եւ կրում է 22 Հոկտեմբեր 1668 թուականը:

«Մեծարգոյ եւ վերապատուելի Տէր. Նամակաբերս վերապ. Տէր կարպետ վարդապետ՝ անկարող լինելով իր լեզուով Ձեր Մեծ. Տէրութեան հետ խօսիլ այս նամակս գրեցի, որ թարգմանի պաշտօն կատարէ: Նա Ս. Աթոռին է ուղարկուած Հայ եպիսկոպոս Ոսկանի կողմից, է արգելուած Հայ եպիսկոպոս Ոսկանի կողմից, Հայերէն լեզուով Ամստերդամում իր տպած Ս. Գիրքը վաւերացնել տարու համար, որպէս զնա առաքելական հաւանութեան կնիքով օժտուի եւ Հռոմէական Եկեղեցուն միացած Հայերն էլ առանց մոլորութեան վտանգի կարենան կարգալ:»

«Գրաբերս Ձեր շնորհներին յանձնարա-

րելով մնամ ամենախոնարհ ծառայ Յովհ. Եպ. կատարեացոց, առաքելական նուիրակ<sup>1</sup>:»

Ոսկանի գործունէութիւնը Հոլանդայում տեսել է 4 տարի եւ այդ միջոցին նա հրատարակել է հետեւեալ գրքերը.

1. 1666 Այբբենարան եւ քրիստոնէական.
2. " Աստուածաշունչ.
3. " Սաղմոս.
4. " Քերականութիւն.
5. " Քրիստոնէական.
6. 1667 Ժամագիրք Մեծ.
7. " Աղօթամատոյց եւ Ժամագիրք.
8. " Մաշտոց.
9. " Քրիստոնէական, Հայ-լատին.
10. " Աղօթամատոյց.
11. 1668 Աղուէսագիրք եւ լշխ. Խօրեն.
12. " Նոր կտակարան.
13. " Տօմար.
14. " Այբբենարան եւ քրիստոնէական.
15. 1669 Առաքել Պատմիչ եւ
16. " Չայնքաղ:

Իր այս գործունէութեան ընթացքում Ոսկան երբեմն թեթեւ վէճեր է ունեցել իր տարանի հայթայթիչների հետ: Այսպէս՝ Ամստերդամի նօտարական արձանագրութիւնների մէջ հանդիպում ենք այսպիսի մի վաւերագրի.

«1668 Փետր. 21.

«Ներկայացան ինձ, վկայեալ նօտար Henrich Outgersիս, Պ. Johan de Leeuw հայ՝ 23 տարեկան, եւ Jan Janoz Reckelman գրաշար, 27 տարեկան, երկուսն էլ Ամստերդամ քաղաքի բնակիչ, եւ այստեղի պարսկական ազգի եպիսկոպոս Ոսկան վարդապետի կողմից յայտարարեցին եւ հանդիսաւորապէս վկայեցին, որ յիշեալ խնդրատուն (Ոսկան) պայման էր կապած գրա-թղթավաճառ Fredericq Schulerusի հետ,

<sup>1</sup> Arch. des Propaganda Rome, Scrittura referite in S. Congr., Vol. 419, fol. 315.

Պատգամաբանայի այս խորհրդածուի Ժ. հատորում (1634—1639) ի մէջ այլոց մի հետաքրքրական զեկուցում կայ Կ. Պոլսի հայերի մասին, Կ. Պոլսից գրուած.

«Կ. Պոլսում հայերի գէմ մի հրովարտակ ելած, որ այն հայերն, որոնց բնակութիւնը այս քաղաքում 40 տարուց աւել չէ, գուրս հանուին եւ տարագրուին Փոքր Ասիա, մինչեւ որ նրանց թիւը իջնէ 100.000 էր:»

«...Edictum Constantinopoli emanasse contra Armenos, ut illi qui a 40 annis citra in dicta urbe habitant, discedant ac in Asiam se transferant, eosque ascendere ad numerum 100 milium animarum», էջ 334:

Ուրեմն Ժ. Գարում հայերն այնքան մեծ բազմութիւն են եղել Կ. Պոլսում, որ տէրութիւնը ստիպուել է կարուկ միջոցի գիմել նրանց թիւը նուազեցնելու... մինչեւ հարիւր հազար հոգու:

որ 200 թերթ տպագրական թուղթ բերէ յանձնէ իր տունը 7ից 8 շաբաթուան ընթացքում: Ոսկան հողանդերէն չհասկանալով կարծել է թէ բերանացի խօսակցութիւնը բաւական էր պայմանը գործադրելու համար:

Յետոյ պարսկական աղգի քահանան կարպետ վարդապետ ներկայանալով բացատրեց թէ իրօք 8 ամիս յառաջ այդպիսի պայման կապուել է, բայց Schulerus իր ժամանակին չէր յանձնել, այլ շատ վերջը, որով Ոսկան վարդապետ չէր ընդունել, այլ յանձն էր առել միայն ժամանակաւորապէս պահել իր տունը մինչեւ որ նա գայ ետ տանի...»:

Մի կարճ ժամանակով տպարանը գտնուում էր միմիայն կարպետի ձեռքում եւ նրա անունն էր փոխադրուած: Աւետիք 1665ին դարձել էր Զմիւռնիայից, բայց յետոյ Ոսկան նրա հետ միասին գնաց Լիվոնոյ իր Զուղայեցի ընկերների հետ հաշիւ տեսներու: Մեկնելուց յառաջ նրանք կանոնաւոր կտակ շինեցին, որտեղ յայտարարում են թէ իրենց բացակայութեան ժամանակ եւ իրենց մահուան պարագային տպարանը դառնում է կարպետի սեփականութիւնը: Այս պատճառով էլ 1668ին տպուած Նոր կտակարանի վրայ գրուած է «... երկասիրութեամբ նուաստի Ոսկանի եպիսկոպոսի... ի տպարանի աշակերտին իմոյ կարպետի բանի սպասաւորի...»: կարպետ վարդապետ այդ միջոցին տպարանը Boomsloot փողոցից փոխադրել է աւելի յարմար տեղ, Kaiserstraat փողոցը:

Արեւ յիշուած հրատարակութիւնների մեծ մասը մարտի տպագրութիւն է: Շատ լաւ է մանաւանդ Աղուեսագիրքը՝ «Գիրք Աշխարհաց եւ Առասպելաբանութեանց, որ է Աղուեսագիրք», որ սկսել է 1668ին «Յամնթերտամում ոճժէ. Հոկտ. 1ին», եւ վերջանում է 1669 Յունվ. 20ին այսպիսի գոհաբանական խօսքով. «Շնորհօք եւ ողորմութիւն ամենազօրին Այ շօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ աւարտեցաւ գրքուկս շահաւէտս»: Այդ տարին, 1669ին էր, որ Ոսկան դադարեցրեց իր գործունէութիւնը Հողանդայում եւ հետագաւ Իտալիա: Հողանդացի պատմագիրները չգիտեն Ոսկանի հեռանալու պատճառը, իսկ Հ. Զարբհանալեան ասում է. «Գաղղիացի մի բանասէր՝ J. D. Bory<sup>1</sup> այս փոխադրութեան պատճառը կը համարի Ոսկանայ կողմանէ խիղճ մը, ոչ ուղղափառ (բողոքական) աշխարհի մէջ եկեղեցական գրքեր տպագրելը: Մենք (Զարբհանալեան)

աւելի հաւանական կը կարծենք նոյն խիղճը՝ զանոնք ընդունող ու իրենց հոգեւոր պաշտամանց մէջ գործածող ժողովրդեան կողմանէ: Զնոյն կ'ակնարկէ Զմիւռնիոյ ժողովրդեան կողմանէ առ խորհրդականս Պոլսուսայ արդարութեան ատենին ուղղած խօսքերը Ոսկանայ նկատմամբ թէ «Ուղեց նախապէս՝ իրմէ հերետիկոսաց Ամստերդամ՝ քաղաքին մէջ հաստատուած տպարանը Մարտիլիա փոխադրել, հոռմէական ուղղափառաց ոճովը գրքեր տպագրելու, ուստի եւ բռնադատեցաւ Հողանդայէն ելնելով ի Լիվոնոյ հաստատել տպարանը: Կ'ուզէր թերեւս այս փոխադրութեամբ սուտ հանել Համազասպանի իրեն դէմ յարուցած ամբաստանութիւնները»: Այս Համազասպանը (Թադէոս քահանայ) նախ ընկերացել էր Ոսկանին տպագրական գործում եւ ապա «Հասու տեսակէտով՝ ոչ թէ միայն իրարմէ զատուեր են այլ եւ իրարու հակառակամարտ երեւցած. եւ Թադէոս զՈսկան արեւմտեայց աչքէն հանելու եւ զինք անպատիւ ցուցնելու համար թուի թէ անոր կրօնական կարծիքն ալ ուզած ըլլայ ամբաստանել, յիրս իրս անհամաձայնութիւնն ընդ արեւմտեայս, որով թէ քաղաքական եւ թէ կրօնական իշխանութեանց առջեւ կասկածելի երեւցնելով անոր ընթացքն ու գործը, մտադրութիւն եւ զգուշութիւն հրաւիրել վրան»<sup>1</sup>:

Ոսկան որոշել էր Գաղղիա յատկապէս Մարտիլիա տեղափոխել իր տպարանական գործն եւ որպէս զի գաղղիական կառավարութեան կողմից արգելքի չհանդիպի, 1669 Մայիս 26ին Լուդովիկոս ԺԳ.ին լատիններէն լեզուով մի աղերսագիր էր ուղարկել եւ իր տպագրած Աստուածաշունչից մի օրինակ ընծայել թագաւորին: Աղերսագիրը նպատակաւոր ընդունելութիւն էր գտել: Ոսկան գնաց Փարիզ եւ արտօնութիւն առաւ Մարտիլիայում, Լիոնում կամ Գաղղիայի որեւէ ուրիշ քաղաքում տպարան հաստատել հայերէն գրքեր տպագրելու, «որովհետեւ, ասուած էր արտօնագրում, այդ գործը մեծապէս օգտակար էր հասարակութեան եւ արեւելեան լեզուների ուսման մեծ դիւրութիւն պիտի ընծայէր»: Բայց միեւնոյն ժամանակ այս արտօնագիրը պայման էր դնում, որ «հրատարակելի գրքերը հոռմէական կաթողիկէ կրօնի վարդապետութեան հակառակ բան չըսվանդակեն»: Ոսկան այս պայմանին համաձայնեց, թէ եւ վախենում էր թէ այս սահմանափակումը կարող է առիթ դառնալ ապագայում հայկական արարողութիւնն ու ծէսերը փոփոխելու եւ նոյն իսկ գործադրութիւնը խանգարելու: Ոս-

<sup>1</sup> Les Origines de l'Imprimerie à Marseille. Recherches historiques et bibliographiques, Marseille 1898.

<sup>1</sup> պատմ. Հայկ. Տպ., էջ 112:

կանի այս երեկուղն անհիմն չէր, որովհետեւ այդ տարիներում ուրիշների ձեռքով տպագրուած գրքերում դրա նշաններն սկսել էին երեւալ:

Ոսկանի գործունէութիւնը Հոլանդայից դուրս՝ մեր պատմութեան չի վերաբերում: Այսչափ միայն յիշենք, որ Ոսկան նախ Լիվոնայում մէկ տարի գործելուց յետոյ տեղափոխուեց Մարսիլիա: Լիվոնայում 1670 ին նա հրատարակեց 2 եկեղեցական գրքոյկ, «Պարտէզ» աղօթագիրքն եւ «Քրիստոնէական վարդապետութիւն»: Նրա տպարանը շարունակում էր կրել էջմիածնի եւ Ս: Սարգիս զօրավարի անունները: Իսկ Մարսիլիայում նա տպեց 1673 — 1675 ընթացքում, 9 գիրք, «Գրքուկ կարեւոր», ժամագիրք, Նարեկ, ճարտասանութիւն, Այբբենարան, Արհեստ համարողութեան, Փոքր Նարեկ եւ «Կանոնք զգուշութեամբ պահելոյ զանձն»: Կաթողիկէ հոգեւոր իշխանութիւնը շատ խիստ կերպով հսկում էր Իտալիայում եւ Գաղղիայում օտար լեզուներով եղած հրատարակութիւնների վրայ. այս հսկողութիւնը տարածվում էր նաեւ հայկական տպագրութեան վրայ: Այս նպատակով յատուկ քննիչ էլ կար Հոռոմուս, Յովհաննէս Յակոբ վարդապետ Հոլով, զարգացած, բազմահմուտ եւ լեզուագէտ մի եկեղեցական, որ ինքնուրոյն երկերից զատ թարգմանութիւններ էլ ունի տպագրուած: Գժբախտաբար կային մոլեռանդ հայազգիներ, որոնք ձգնում էին կասկած յարուցանել Ոսկանի տպագրութիւնների «կրօնական մաքրութեան» մասին եւ Հոռոմի ուշադրութիւնն էին հրաւիրում նրանց «Պնասակարութեան» վրայ: Այս հանգամանքը քիչ չէ ազգած Ոսկանի բարոյական եւ ֆիզիկական կացութեան վրայ, մանաւանդ որ նիւթական միջոցների կողմից էլ նա շարունակ դժուարութիւնների էր մասնուած, որ մասամբ պատճառ է համարվում նրա մահուան 1674 ին Մարսիլիայում: Հայկական տպագրութեան պատմութեան մէջ այս եռանդուն եւ արդիւնաւոր աշխատաւորը պատուաւոր տեղ է գրաւում:

Ոսկան իր գործունէութիւնը Մարսիլիա փոխադրելով հանդերձ իր տպարանի ամբողջ կազմը չէր կարողացել հետը տանել: Նրա տաների մի մասը մնացել էր Ամստերդամում: Հոլանդական ազգիւրների համաձայն այդ միեւնոյն տառերը գնելով Անդրէաս Ակոլութոս (Andreas Acoluthus) տպել է Լայպցիգում 1680 ին իր Obadias Armenusը (ճաշոց Գիրքն), որ Գերմանիայում առաջին հայ տպագրութիւնն է:

(Շարունակելու):

ՄԱՐՈՒՍԱՆ

### Ծ Ա Ն Օ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ք ՍՏՆՄՈՒՄԵ ՊԵՏՐՈՒԹԵԱՆ ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻԻ ՔԷՕՍԻԻՐՃԵԱՆ

(Տես ՀԱ. 1913, էջ 167:)

#### Գ Լ Ո Ւ Ս Ե.

ՏՈՂ 3. Այս սողով երեմիա կը յայտնէ, թէ բաւական կը համարի Կ. Պոլսոյ հարաւային կողմերը կատարած պտոյտը, զոր ձեռք առած էր Գ.Պ գլուխին սկիզբը: Իր հիւր վարդապետը բերած ճամբէն ետ դարձնել կ'ուզէ, նորէն նա դնել՝ որպէս զի ուրիշ տեղեր անոր դիտել տալով՝ զբօսցնէ. բայց ծով չիջած՝ կ'որոշէ ձիերուն հետ հանդիստ մը առնել Սիլիվրի Գրան մօտ, ուրկէ տեսարանը իսկապէս հիանալի կը գտնէ: 707 էն 200<sup>ր</sup> սողերը նկարագրութիւնն են այդ տեղին, որ թէեւ այժմն ալ ունի նոյն գեղեցկութիւնը, բայց երեմիայի գրչին ցոլացուցած բանաստեղծական հրապուրիչ վիճակին մէջ բնան չի գտնուիր:

ՏՈՂ 5. «Սիլիվրի Դուռ» կամ Սիլիվրի Դաբուսի, որ Կ. Պոլսոյ պարիսպներուն 25<sup>ր</sup> Գուռն է: Այս դռնէն առաջ է Եէնի Գաբու, յետոյ Թօփ-Գաբու (թնդանօթագուռ) Գ.Պ գլուխին 49<sup>ր</sup> սողին մէջ յիշուածը, որու մասին խօսիլ՝ հոս աւելի պատշաճ կը համարիմ:

Այս Թօփ-Գաբուի դռան անմիջապէս ներքը կը գտնուի հայաբնակ փոքրիկ թաղ մը, ուր ունինք Ս. Սիկողայոս անուն եկեղեցեակ մը: Կ'ըսուի թէ առաջին անգամ իբրեւ մատու շինուած է այն 1813 ին<sup>1</sup> եւ երկրորդ անգամ 1823 ին<sup>2</sup>. Բայց 1832 Յունիս 4 ին Ազաւնի Ստեփանոս Պատրիարքին օրով բոլորովին նոր վերաշինուած է ժողովուրդին լուծաներովը եւ ձրի աշխատութեամբը, ինչպէս կ'իմանանք Եկեղեցւոյն ճակատը գրոշմուած Արձանագրութենէն, զոր հրատարակել տուած եմ 1900 ին<sup>3</sup>:

1825 էն սկսած, այս Եկեղեցիին կից հիմնուած են Լիւոնեան մանչերու եւ Վարդուհեան աղջիկներու նախակրթարանները, որոնք

1 Տարեցոյց Ս. Փետրուս Աւէ. Հիւսիս-արեւմտ, 1909՝ էջ 64:  
2 Էջ 7, էջ 66:  
3 Եջ 7, 1900, էջ 160 եւ 1904, էջ 327: